# ԹԵՄԱ 4 ԱՖՐԻԿԱ

## ԴԱՍ 4.3. Աֆրիկայի բնակչությունը

. . .

*Ինչ-որ ժամանակ տուարեգները տիրել են Սահարայի զգալի մասին և հարևանները մշտապես ենթարկվել են նրանց ավազակային հարձակումներին):*

*Տուարեգների առաջացման վերաբերյալ բազմաթիվ տեսություններ կան , որոնցից մեկը հավաստում է, որ նրանք խաչակիր ասպետների հետնորդներն են, որոնք իրենց ճամբարներում բռնկված խոլերայի համաճարակի պատճառով փախել են անապատներ: Հայտնի է նաև , որ տուարեգներն էլ մշտապես հալածվել են արաբների կողմից , թաքնվելով դժվարանցանելի լեռներում: Նրանք «տուարեգ» անունը ստացել են իսլամի մոլեռանդ հավատացյալների կողմից, որը նշանակում է «ազատներ», «անկախներ»:*

*Տուարեգների մասին պատմական տեղեկությունները վկայում են , որ նրանք հաստատակամորեն կարողացել են, իրենց ազատությունը պաշտպանել եկվորներից:*